Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱՀ-359 20.06 2025թ.

ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Մ. ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աղաջանյան,

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի և «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ միջև կնքվել է ՆՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4-1 (կնքված 2024թ դեկտեմբերի 12-ին), ՆՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-2 (կնքված 2025թ հունվարի 16-ին), Ն ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1 (2025թ ապրիլի 25-ին), ծածկագրերով բժշկական նշանակության ապրանքների մատակարարման պայմանագրեր, որոնց շրջանակներում «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ՝ 2025 թվականի հունիսի 03-ին ներկայացվել է պատվեր-հայտ:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է 20 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, սակայն հայտով ներկայացված ոչ մի չափաբաժնի մասով մատակարարում չի իրականացվել:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 17.06.2025թ. ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի իրականացրել ստորև ներկայացված չափաբաժիններով ապրանքների մատակարարումը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հինք ընդունելով Պայմանագրի 8.9-րդ կետը «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ն միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագրերը նշված համապատասխան չափաբաժիններով՝

- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4-1 ծածկագրով պայմանագիրը 20-րդ չափաբաժնի մասով,
- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-2 ծածկագրով պայմանագիրը 44-րդ չափաբաժնի մասով,
- ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1 ծածկագրով պայմանագիրը 29-րդ չափաբաժնի մասով,

Պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառվում է ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկվում է պայմանագրերը միակողմանի լուծելու հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող 5 օրվա ընթացքում «Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի 1570053952390100 հաշվեհամարին վճարել՝

- ✓ **որակավորման ապահովման՝**
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4-1 --- 12,150 (տասներկու հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-2--- 118,530 (մեկ հարյուր տասնութ հազար հինգ հարյուր երեսուն) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1 --- 16,500 (տասնվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

- ✓ **պայմանագրի կատարման ապահովման՝**
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/4-1 --- 8,100 (ութ հազար մեկ հարյուր) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/17-2 --- 79,020 (յոթանասունինը հազար քսան) ՀՀ դրամ,
- ✓ ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/28-1— 11,000 (տասնմեկ հազար) ՀՀ դրամ,

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գրությամբ սահմանված ժամկետում ապահովումները չվճարելու դեպքում Պատվիրատուի կողմից կկայացվի պատճառաբանված որոշում, որը կուղարկվի լիազոր մարմին՝ «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը սկսելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ՝ **ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ**

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/